

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմայն խմբագրատան մէջ:

(Օտարադպրացիք գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“)

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Դացի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱ-
ԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1880 թին

Կը ՀՐԵՏԵՐԵԿՎԻ ԵՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօների հե-
տեւալ օրերից:

Լրագրի դիմաց և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում
ենք ՍԵՓԵԿԵՆ ՀԵՌԵՐԻՆԵՐ: «ՄՇԱԿ» տարեկան գինը
10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ: Գրելը կարելի է ՄԻԼՅՆ
ԽՄԻՐԵՐԵՏԵՆ մէջ:

ԵՌԵՆՁԻՆ ՀԵՄԵՐԵՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը:
Օտար քաղաքներից պէտք է գիտել հետեւալ հասցէով
Тиф. Редакция „Мшакъ“.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԵՐՈՒՆԻ

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց թատրոնի գործը:—Ներքին տեսու-
թիւն: Ներքին լուրեր:—Արտաքին տե-
սութիւն: Զինվորական: Զինվորական:—Մշա-
կէն հեղափոխութիւն:—Հայտարարութիւններ:—Բա-
նասիրական: Իմ պատմական վաստակ Պա-
պանանանին:

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԻ ԳՈՐԾԸ

II

Ե՛հա թէ ինչ կարող են պա-
տասխանել մեզ մեր երէկվայ յո-
ղուածին:

Հայը համակրում է այժմեան
հայոց թատրոնական ներկայա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ Պ. ՎԱՍԱԿ ՊԱՊԱՋԱՆԵԱՆՑԻՆ

Պ. Գոկտօր. «Մշակ» 129-ը համարը ստիպել է
ձեզ մի քանի անգամ նորա թղթակից Հին-Բա-
րեկամին, որը ձեզ անդգիտեմ, «ստախտ» և
«ստախտ» այդ անականները ձեր վրայից և ուղղա-
կի Հին-Բարեկամին պատասխանելու, յարձակվում
էք ինձ վրա՝ Հին-Բարեկամ ինձ համարելով: Վը-
նաս չունի. թող Հին-Բարեկամը ինձ Բէդ-Նաղա-
րեանցը, Հին-Բարեկամի փոխարէն Բէդ-Նաղա-
րեանցը ասելով դուք չէք կարող ապացուցել որ
ձեր գիտելով մի անգամ վաճառական են, դուռ չուր
դեղին գլուխ ունի, ամառու կատուն ընտանի չէ,
բանի որ նորա ականջները չեն կտրած, և այլն:
—Դուք այս տարի հրատարակեցիք «Հայկական-
Աշխարհ» մի համարը. ես ասացի ձեզ որ ձեր լե-
զուն հայերէն չէ. ձեր խօսակցութեան ու գրութեան
քի մէջ լոգիկա չը կայ. իմ կարծիքը լրագրութիւ-
նը հաստատեց: Այժմ կրեցի վարդապետի սրբա-
գրութեամբ հրատարակել էք մի քանի, որի
մէջ բացի լոգիկայից և ճշմարտութիւնից ամեն
բան կայ: Օրինակի համար, մէջ բերեցի ձեր քո-
չիւրի հենց առաջին երկու տողը, ուր ասում էք.
—«Երբ ես Շուշի թողնեի, կարծես որ աղափոխի
այս կամ այն լրագրի տեղի կամ ան տեղի
յարձակմունքներից: Այս տողերի լեզուական ըս-
խախտի մասին ոչինչ չեմ խօսում, նայում եմ
միայն լոգիկային: Անտիկ յարձակմունքներից ձեզ
աղաքած կարծեմ ունիք իրաւունք ամեն տեղ,
ուր որ էլ գտնվէք. բայց ինչ հիման վրա էլք

ցումներին երկու պատճառներով:
«Եւ» գործի նորութեան պատ-
ճառով և երկրորդ՝ որ ամեն տեղ
ամեն ազգի մէջ թատրոնական
գործը սկսվում է ոչ թէ ինքնու-
րոյն գրուածներով, այլ թարգմա-
նութիւններով, նմանողութիւննե-
րով և ուրիշ ազգերի գրականու-
թեանց և կեանքից վերցվող փո-
խադրութիւններով:

Երկու պատճառներն էլ մենք
սխալ և ամեն կրիտիկայից ստոր
ենք համարում:

«Եւ» այժմեան հայոց մշտա-
կան խմբի մէջ ոչինչ գործի նո-
րութիւն չը կայ: Վաթսուննե-
րորդ թվականներում հայոց ներ-
կայացումները նոյնպէս տրվում
էին կանոնաւոր կերպով, գրեթէ
շարաթը մի անգամ, նոյնպէս կո-
միտէտ կար, ներկայացումները
տրվում էին աւելի լաւ թատրո-
նում, քան թէ այժմեան Մա-
րային թատրոնը, այն է քաղա-
քային մեծ թատրոնում, որ այժմ
այրված է և որ աւելի փառաւոր
էր, աւելի լաւ լուսաւորված էր,
աւելի մեծ էր, աւելի հարուստ

էր, աւելի լաւ ընդունան ունէր
քան թէ այժմեան թատրոնը:
Մարային թատրոնը նոյնպէս մի
մասնաւոր, սեփական թատրոն չէ,
որ կարող էր դառնալ հայերի
համար մի մշտական բեմ, ուր
այդ բեմը միշտ, գոնէ շատ տա-
րիներով, հաստատ ապաստան գտ-
նէր, ուր հայ թատրոնական գոր-
ծը, եթէ կարելի է ասել, իր
տան մէջ լինէր, իրան իր տանը
զգար. դա կը լինէր գոնէ նորու-
թիւն:

Պիէսաների բովանդակութեան
կողմից նոյնպէս չէ կարելի բառի
բուն նշանակութեամբ գործի
նորութիւն համարել այժմեան
թատրոնական ներկայացումները:

Ընդհանուրաւ եթէ գործի
նորութիւն կար, — դա վաթսուն-
ներորդ թվականներում էր, երբ
հանդէս էին դուրս գալիս հայոց
բեմի վրա մի կողմից հին հայոց
պատմական կեանքի թէև թոյլ
և պակասաւոր հետազոտութիւն-
ները, իսկ միւս կողմից ծնունդ
առան Փուլինեանի, Բժիշկ Տեր-
Վրդգորեանի և Սունդուկեանի

քաղաքին է ուղարկել ձեզ իր պատգամաւոր, ցոյց
տալ ձեր պատգամաւորութեան թուղթը. բայց
դուք, տեսնելով ձեր ասածի ճշմարտ չը լինելը,
վերադարձել էիք յուսահատ: Այս իրողութիւնը
յայտնեց ու առաջնորդը ձեր երեսին, հոգաբա-
րութեան ժողովում. դուք յանձն առաք որ այդ-
պէս է եղել, բայց հիմա ձեր բնույթի 16-րդ երե-
սումն ասում էք. «Եթէ նա (առաջնորդը) մեզա-
նից պատգամաւորութեան թուղթ, կամ պատգա-
մաւորութեան թղթի նման մի բան խնդրած ու
պահանջած լինէր, մենք չէինք զանազ առաջա-
դրելու նրան, որովհետեւ այդ տեսակ թուղթ ու-
նէինք մէկ կի տեղ երկուսն, երեքն և
ինչքան կամ մի անգամ. Բէդ-Նաղաբեանցը,
դարձեալ անլոգիկա և անտարբէր խօսուածք: Ան-
լոգիկա՝ որովհետեւ պատգամաւորութեան համար
հարկաւոր էր մէկից աւելի թուղթ. մի և
նոյն նպատակի համար մի թուղթ միայն կը տար
ձեզ ժողովուրդը և ոչ թէ թղթի հակներով կը
ծանարանէր իր պատգամաւորին: Անտարբէր է՝ ո-
րովհետեւ եթէ այդքան թղթեր տարած լինէր
ձեզ հետ, գոնէ մի հատը կը տարէր նրան նոյն ժա-
մին և կամ թէ միայն հիմա:—Նոյն քանի 15-րդ
երեսումն ասում էք. «Երբ հոգի ձայնաւոր քա-
ղաքայիններից և ես՝ ընտրվեցի որպէս
պատգամաւոր Նիկիապոլիսի ներկայա-
նակ...» Ինչ է նշանակում «նիկիապոլիս» և ինչ
տեղ ձեզ. եթէ ժողովուրդը՝ ինչպէս չը ներկայաց-
րիք ժողովուրդի գրաւոր ձայնը. բայց չէ, դուք
աւելի լաւ էք ասում թէ՛ «նիկիապոլիս», այսինքն
դուք ձեզ ընտրեցիք, և զարմանալի չէ, որ բեռ-
նեղով թղթեր տարած լինէր ձեզ հետ: Բնույթի
16-րդ երեսի վրա ասում էք. «Եթէ մի Բէդ-Նա-
ղաբեանց ինքն չը գիտէ որ միանգամայն աւելի է
յայտնի ինձ պատգամաւոր ժողովուրդի բողո-
քը իրանից առ վիստաւ կաթողիկոս...»
Հաւատարմութեամբ եմ ձեզ, պ. Գոկտօր, որ այդ բանը
յայտնի չէ մեզ, բայց մի և նոյն խանութի հարց-
նում եմ ձեզ, ինչպէս չը խնայեցիք մի

ամբողջ ժողովուրդի բողոքագիր ոչ թէ մի, այլ մի
քանի անգամ պատգամաւորութեան թուղթը որ նա
իր դպրոցներից պատգամաւորութեան թանաքով վրա
գանդատէ ու հարկն է: Եթէ համոզված էիք
որ ժողովուրդի բողոքը ճշմարտ էր իմ մասին և երբ
դեղեցիք նրան ճշմարտութիւնը յայտնելու, ապա
դուք ճշմարտ ասէր չէք և այդ մեծ պակա-
սութիւն է ձեզ համար. իսկ եթէ դուք ճշմարտա-
սեր էք, ուրեմն ձեր պատգամաւորութեան թղթերը պէտք
է անհիմն և ճշմարտութեան հակադրութիւն լինէին:
Ահա դարձեալ ձեր կողմից հակասութիւն: Մի այլ
հարց. եթէ ժողովուրդն անբաւական էր ինձանից՝
իրեւ անարժան տեսլից, ինչու միայն ցա-
սոր գէթ միանգամ չէ դանդաղել թէ
նախկին և թէ այժմեան հոգաբարձութեան.
Ինչու համար է միշտ ձեզ դիմում ինձ վրա դա-
նապատելու. իսկ եթէ նախկին կամ այժմու հոգա-
բարձութեան ևս յայտնի լինէր ժողովուրդի արտուն-
ջը, ինչու համար նախկին հոգաբարձութիւնը չըն-
դունէր իմ այս տարվայ յոբանիս 11-ին տուած
գրաւոր հրաժարականը, ինչու համար ներկայ հո-
գաբարձութիւնը ևս, որի մի անդամն էլ դուք
էք, դարձեալ այս տարվայ յոբանիս 9-ի օրագրու-
թիւնով տեսուչ ընդունել ինձ, ինչու չէիք դուք
բողոքում այդ ընդունելութեան դէմ. կամ եթէ
ձեր բողոքը ընդունած չը լինէր, հոգաբարձութիւնը
երեսազատութիւն անէր և պահէր ինձ, ինչու
դուք, ըստ ձեր ասելոյն՝ «իր երկրպագու ճշմար-
տութեան», ճշմարտութիւնը վարդապետը հոգա-
բարձուների հետ գործակից մնացիք, չէ որ այդ
աններելի է ձեզ պէս ճշմարտասեր փիլիսոփա-
յին: Տեսա՞ք թէ ինչպէս Պ. Վ. Գեղամեանցը
հրաժարվեց քաղաքական վարչութեան անդամ լի-
նելուց, (թէ և միանգամ համախօսութիւնով ընտր-
ված էր) երբ իրանից յետոյ թուրքերը ձեզ ընտ-
րեցին իրեւ երկրորդ անգամ, և բաց յայտնեց նա-
հանգապետին որ ձեզ հետ անհարկն է միայն
ծառայել, ասա՛, թէ ինչ կը նշանակէ համոզմունքի
տէր լինելը. բայց նա անարկան 1500 ռուբլուց

